

gasse (Autriche) No 4 Vienne

BADE 669

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                  |        |
|------------------|--------|
| Պուշկարիոյ համար | համար  |
| սարկիսի          | 12 ֆր. |
| վեցանկայ         | 6 "    |
| Արսասահեանի      |        |
| համար սարկիսի    | 15 "   |
| վեցանկայ         | 8 "    |
| Ավերիկայի համար  |        |
| սարկիսի          | 3 ֆր.  |
| վեցանկայ         | 1 50 " |

Իսկուսական տղա սուս  
 ցին երեսին համար 40 ս.  
 լակ վերջին երեսին հա-  
 մար 20 սակֆիսի է. երե-  
 ֆին սեղի սկզբաներու  
 համար 20 0/0 զեղչ կը-  
 յայ:

Վառնայի համար  
 ձևի 10 սակֆիսի

# ՇԱՐՄԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱՍԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՖՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄ. ՕՐԵՐԸ

Գրական և գրական գրկի  
 լուսաբանական հաս-  
 ցիկի

Редакция на вѣтъникъ  
 „Шаржумъ“  
 Варна

Redaction du journal  
 „Char om“  
 Yarna (Bulgarie)

Պուշկարիոյ համար  
 ձևի 15 ՍԱԼՔԻՍ

Արսասահեանի համար  
 ձևի 20 ՍԱԼՔԻՍ

Գրուք ձեզ ևս չե՞ն  
 տրոք

ՇԱՐՄԻՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

### ՍԵՒ ԲԱՂԱՔԱՍԻՆ

Այս... անյուսու թեան դժնէ ժա-  
 մերուս  
 Մասյ ճակատս ծաղկերով լեցուն  
 Ի դժուր կը ձգտիմ խոյ երազներուս  
 Ծովի մը չափ խո՛ր, երկնի պէս ան-  
 հուն...  
 Այս, կը խուսափի՛ն... ու ես խե-  
 լայնից  
 Կատաղած, փրփրած... օ՛հ՝ սակայն ան-  
 զօր՝  
 Գայթապել կուզեմ աշխարհ չփել  
 Կոխկոտել, ցրե՛ն՝ բեկորներն անորս  
 Կուզեմ ծովը ըլլալ՝ անհեղ, անյա-  
 տակ,  
 Փրփրի՛ն, սուրա՛ն ցամաքին վրայ,  
 Անգիւղ ու թագել անգունգներուս  
 տակ՝  
 Անիրաւութեանց քասն հսկայ...

տալիս : Սա կատարեալ խայտա-  
 ապուստիան է : Ընչոտ որ հայ խմ-  
 բագրի, մանաւանդ բարեխիղճ  
 խմբագրի կատարած գործը հայ  
 կեանքում բացարձակ հերոս մար-  
 տիրոսութիւն է :

Իհարկէ խօսքս այն խմբագրի-  
 ների մասին չէ, որոնց նման-  
 ները հրատարակվում են եզրիպ-  
 տոս, ալս «Ժողովուրդ» և Բուլ-  
 գարիսյում ալս «Իրաւունք» և  
 «Հայաստան» ալս նրանց մա-  
 սին, որոնք թերթի հրատարա-  
 կում են իրապէս իրենց ժողովր-  
 դին օգտակար լինելու համար և  
 իրենց գրված յօդուածներին հա-  
 մար արիւն, շիղ և ուզեղ են  
 մաշեցնում :

Ճշմարիտ գործանալի է հայը :  
 Նրա հետ խօսածք միջոցին հաս-  
 կանում ես որ նա սիրում է այս-  
 ինչ կամ այն ինչ թերթը, ոգե-  
 ւորվում է այսինչ կամ այն ինչ  
 ամսագրով, թերթով, իմբագրի-  
 րով, գրապէտով : Բայց երբ  
 մանրազնին ըննութեան ես են-  
 թարկում այդ ոգեւորվող ըն-  
 թերցող հային, տեսնում ես որ  
 նա ոչ մի սահման չէ տեսել իր  
 սիրած, զինքը ոգեւորող թեր-  
 թին, ոչ մի սահման չէ տեսել իր  
 սիրած գրագէտի հեղինակու-  
 թիւններին : Հայը մեծամասնու-  
 թեամբ ներկայանում է ձրիտեղե-  
 րու ուղում է ձրի թերթ կարգալ,  
 ձրի վիրք կարգալ, ձրի ազա-  
 տութիւն ստանալ, ձրի ոգեւոր-  
 վել : Հայը միշտ լաւ մարդ է  
 ներկայանում երբ նրանից փող  
 չես ուզում, ու եւ զտնօրէն  
 չես պահանջում : Հայը 100 ֆր. ոչ  
 աղքատէր, բարեբար գործիչ է ու-  
 զում ներկայանալ :

«Իրօջակող» երբ որ ձրի էր.  
 նրա ընթերցողներին թիւր, մա-  
 նուանդ արտասահմանում եթէ  
 կամենային տեսնեակ հազարի  
 կարող էին հասցնել, բայց այսօր  
 «Իրօջակող» ոգեւորվող հայը մե-  
 ծամանութեամբ երեք ֆրանք  
 չէ ուզում վճարել իր միակ լաւ  
 վարված զուտ յեղափոխական  
 թերթին բաժանորդ գրովելու հա-  
 մար :

Այս, այս խայտաապուստիան է.  
 այնպիսի մի խայտաապուստիան  
 որի նմանը գոյց է ոչ մի ազգ չէ  
 ունեցել :

Բայց մինչեւ ե՞րբ պիտի տե-  
 ւէ այս ամբօթալի խայտաապու-  
 ստիւնը...

ՎԱՐՊՈ

### ՆՈՐ ԱՄՍՈՐԻՆԱՍԻՐ

Ամեն ոքի յայտնի է Ռուս կառա-  
 վարութեան 1903 թուի, յունիս 12-ի  
 հրատարակած չարաքառակ օրէնքը :  
 Նոյնպէս յայտնի է հայ ժողովրդի  
 միահամուս գիմադրութիւնը այդ օ-  
 րէնքի գործադրութեանը, որ արտա-  
 յայտվեց անգուսպ ժողովրդական  
 ցոյցերով բոլոր այն վայրերում, ուր  
 կար հայութիւն և հայ-եկեղեցական  
 գոյք : Ամբողջ աշխարհն իմացաւ, որ  
 Ռուս հակայական կառավարութիւնը  
 բացարձակ կոխ յայտարարեց մի  
 բուն անգէն ժողովրդի դէմ և սու-  
 ինների ու գնդակներն ու ժող ժողո-  
 վրդի սրբութիւնն ու դիակները կոխ  
 տալով : անցաւ լրբօրէն յափշտակեց  
 հայ-եկեղեցական գոյքն ու դօղու-  
 մենաները : Այդ դեռ բաւական չէր,  
 նա իր անհամար բանտերը լցրեց հայ  
 ամենաթարմ ու առողջ ոչ ժողով և  
 բազմաթիւ յայտնի և անյայտ մարդ-  
 կանց առանց արմուկի, առանց ամե-  
 նափօքիկ շշուկի հետաւոր աքորա-  
 վայրերն ուղարկեց :

Երբ ռուս բիրտկրատիան ակրն-  
 յայտնի կերպով հիասթափվեց իր  
 այդ անյաջող ձեռնարկութիւնից՝ զը  
 բաւել հայ-եկեղեցական գոյքն ու կա-  
 ուածները, մի րոպէ կարծվում էր,  
 որ նա յետ կը կանգնի իր հայերի հետ  
 բունած այդ վտանգաւոր խաղից : Մի  
 րոպէ կարծվում էր, որ հետզհետէ  
 խաղաղասիրական միջոցներ առաջ կը  
 գցվին և կամայ-կամաց բաց կը թող  
 նէին բունուածները ու կը վերադառ-  
 նան բարոյութեանը : Բայց այդ լոկ  
 կարծիք էր, ցանկալի մի մտապատ-  
 կեր, որ յօգս ցնդեց : Դուրս է գա-  
 լիս, որ ռուս կառավարութիւնը հեշ-  
 տութեամբ ձեռք չի վերցնի այն խա-  
 ղից, որ սկսելէ մեզ հետ : Ծառ հիմ-  
 նաւոր է ժողովրդի մէջ տիրող համոզ-  
 մունքի բնաւորութիւն ստացած այն  
 կարծիքը, որ եթէ այնքան յարմար  
 ժամանակին վրայ չհասնէր Ռուս-ձա-  
 պօնական պատերազմը և ձապօնացու  
 իրզախ պէնքը չկտորէր ռուս կառա-  
 վարութեան մէջքը, հայ տարրը կով-

կասի մէջ ստիպուած կը լինէր մի ան-  
 յոյս, սակայն հերոսական մաքսուում  
 սկսել ու սակաւ խաւար ոյթի գէմ :  
 Ռուս կառավարութիւնը յարմար րո-  
 պէ կը համարէր վերջնականապէս ի-  
 բագործել իր վաղուցուայ օձայաստան  
 առանց հայերի ճիւղաղային ծրագրեր  
 և ապաստել կովկասի հայկական վր-  
 տանգից : Այո՛, հիմք կայ կարծելու,  
 որ այդպէս կը լինէր, եթէ փրկարար  
 հրեշտակի նման չյայտնուէր ճապօնա-  
 ցու յաղթական զէնքը : Սակայն ռուս  
 կառավարութիւնը դեռ էլ յամառու-  
 թեամբ շարունակում է իւր հալա-  
 ծանքը հոյերի դէմ : Անցեալ շաբաթ,  
 Հոկտեմբեր 25-ին Թիֆլիսից մեկնե-  
 ցին դէպի սուսական ներքին նա-  
 հանգները 32 Ալքսանտրապօլցի և  
 երեսանցի հայ աքորականներ : Դր-  
 րանցից 8 հոգի Ալքսանտրապօլ  
 քաղաքից յայտնի անձնաւորութիւն-  
 ներ են՝ վաճառական Ջանաթեան ե-  
 րեք եղբայրներ, որոնց արգելուած է  
 Տաշկէնտի և Աստրախանի նահանգ-  
 ներից դուրս ապրել : Արաքսիան  
 Յովհաննէս, որ յայտնի ուսուցիչ ու  
 մանկավարժ է և ունի մայրենի լեզ-  
 ուի ձեռնարկ և թարգմանութիւն-  
 ներ : Միրզոբան, Ստեփանեան և ու-  
 թիշները : 40 հոգի երեսան քաղաքից,  
 որոնց մէջ են Տ. Տ. Աշխէն, Լիզա,  
 Արմենակ Ալտեան, Գէգէօն, Ծու-  
 շանեան, Կարապետ Մուշեղեան, որ  
 ռուս բանակում որպէս միլիցիական  
 օֆիցեր, մասնակցել է Ռուս-թուր-  
 քական պատերազմին, իսկ այժմ  
 պաշտօնաթող : Մնացած 14 հոգին ե-  
 ռեսանի գաւառից են :

Ու մեկնեցին, հետացան նրանք :  
 Ուր, Յայտնի չէ, ցուրտ հիւսիսի  
 ներքին նահանգներում, որտեղ որ  
 քամին կը նետէ նրանց, — այնտեղ,  
 Ինչքան ժամանակ պիտի մնան այն-  
 տեղ : Նոյնպէս յայտնի չէ, կը մնան  
 այնքան, մինչեւ որ, եթէ կենդանի  
 լինին, մի օր կը յայտնեն Երանց թէ  
 կարող էք վերադառնալ և կամ թէ  
 իսկի էլ չեն յայտնի :

Սա տարօրինակ է. բայց կայ ա-  
 ւելի տարօրինակը : Ինչո՞ւ, ինչ  
 յանցանքի համար է, որ աքորում  
 են 32 մարդկանց : Իմ սիրելի ընթեր-  
 ցող, դա էլ յայտնի չէ, Ռուսական  
 բանակապետութեան սխտեմն է այդպէս  
 պահանջում : Դուք «նկատելի էք»,  
 դուք «աչքի էք ընկել» և պէտք է  
 հպատակեք կառավարչական կար-  
 գադրութեանը և լուս ու մուշ զի-  
 մէք դէպի աքորավայրը՝ արդար,  
 թէ մեղաւոր : Դուք զուր մի թիւ-  
 րիմացութեան զօ՛ր էք ՚ կամ թէ  
 վարձկան անհամար լրտեսներից մէկը

### ՍԻՆՉԵՒ ԵՐՐ

Այսօրվան մեր թիֆլիզի աշ-  
 խատակցի յօդուածը «Մուրճ»  
 ամսագրի մասին, ցոյց է տալիս  
 որ «Մուրճ» պէս բաւական լուրջ  
 և խնամքով պատրաստված միակ  
 հայ ամսագրին իսկ, իր լեզալ  
 գրութեամբ, որ կարող է մի  
 քանի միլիոն հայութեան մէջ  
 տարածվել, չէ կարողանում իր  
 խմբագրին անգամ ապահովել :  
 Ամբողջ հայութիւնը «Մուրճ»  
 համար միայն 900 բաժանորդ է

վարձատրուելու համար, կամ թէ ինչ-նամանքից որդու անմասնանի է անգ իշխանութեան անհատու պոլիցիակառնութեան հոգսը չէ: Առանց քննութեան, առանց դատաստանի անգ կայսրեն և նոյնիսկ կախ կտան և քիչ դէպքեր չեն պատահում, որ բերդերի ու բանտերի ծածկուած պատերի մէջ մարդիկ են կախուում: Այդքան անսահման իրաւունքի տէր է ուս պոլիցիան:

96-97-ի թրքական ջարդերից ուսական սահմաններում ապստան զբտան մեր եղբայրները երկու տարի է, ինչ այստեղ հայաժանքի են ենթարկուած: — կամ ուսական հպատակութիւն ընդունել, կամ վերադառնալ: — այդ էր սկզբում ուս կառավարութեան պահանջը փախստականներից և 1902 թուին գաղթականների մի մեծ խումբ, ամենասուկայի վիճակի մէջ, ճանապարհ ընկան դէպի հայրենի երկիրը: Ինչ եղան դրանք, ինչ չեղան, յայտնի չեղաւ: Այնուհետեւ խումբ խումբ այստեղ մնացած թըռուականներին ուսական մտրակի տակ քշում են Ռուսիայի հետաւոր խորքերը: Այլեւս չեն ընդունում ուսական հպատակութիւն ընդունելու և կովկասում մնալու խնդիրները: Պէտք է կամ ուսաց սահմանից դուրս գալ, կամ Ռուսաստանի խորքերը գնալ: Այժմ մի շարք արհեստագործ և ծառայողներ ընտանիքներով մի քանի օր ժամանակ է տրուած, իրանց գլխին ճար անելու, ժամանակը անցնելուց յետոյ, դրանց էտպով Տոսկի Նահանգը կուղարկեն:

Ֆալագ

1904 Հոկտ. 31  
Թիֆլիս

ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Քաղաքիս եկեղեցիին պատերը ներկելու ստիպողական (1) պահանջքին զոհացում տալի յետոյ, Թաղ. գործոց կարգ. մասնախումբը, վերջապէս, սկսեց է Սասնոյ կարօտեալներուն օգնութիւն հասցնելու խնդրով հետաքրքրուել և այս նպատակով կազմուած յանձնախումբ մը արդէն հանգանակութեան ձեռնարկեր է: «Աւել ու ջան երբէք չի սկզբունքէն առաջնորդուելով, մենք ի սրտէ կը շընորհաւորենք մասնախումբի սոյն քայլը և իրայոս ենք որ ամէն պարտաճանաչ և սրտի տէր հայ պիտի փութայ իր մասնակցութեամբ նպաստել այս զուտ ազգասիրական և մարդասիրական գործին:

Թրքական բարբարոսութիւններէ մազապուր ազատած, անպատասխար և անթիփ ժողովուրդ մը, այն ալ իր իրաւունքներու պաշտպանութեան համար մինչեւ վերջը հերոսաբար կուտայ և զիմադրող ժողովուրդի մը մնացորդները, ցրտէն և սովէն իսպառկոտորուելու վտանգէն ազատելու նպատակը ինքնին այնքան սրտի մօտ և վտեմ է, որ հասարակութեան գիտակցութիւնը և գութը շարժելու ունենալու անհրաժեշտ է համարիմ:

Միայն թէ հորց կը ծագի այստեղ դրամի փոխադրութեան եղանակի մասին:

Մասնախումբը իր այս ձեռնարկին զիմած ըլլալով Պոլսոյ պատրիարքարանէն իրեն եղած առաջարկութեան

բաւարարութիւն տալու համար, հաւանականաբար տրամադիր է հանգանակուած գումարը պարտաբարան զրկելու: Մինչդեռ իմ կարծիքով աւելի նպատակաւարձ է դրամը փարիզի մէջ այդ նպատակով կազմուած յանձնախումբին ուղղարկել:

Արտասահմանի գրեթէ բոլոր հայ թերթերը ծանուցին արդէն թէ Փարիզի մէջ յանձնախումբ մը կազմուած է Փրանսացի հայասէրներէ: Բոլորն ալ հեղինակաւոր մարդիկ, որուն նպատակն է Փրանս. Ռթ. գործոց նպատարութեան միջոցաւ նպաստներ հասցնել Սասնոյ և Մուշի հայ կարօտեալներուն: Բոյ Արմէնիսի վերջին թուին մէջ կը կարդանք որ յիշեալ յանձնախումբը Պ. Տէլքաւազի միջոցաւ վանի Փրանս. փոխ-հրկատուին զրկած է արդէն 35.000 ֆրանքի գումարը, որ խնամքով պիտի բաժնուի կարօտեալներուն: Նոյն թերթի խմբագրութիւնը կ'աւելցնէ, թէ ստացուած նպատակները զեռուսանրաւակն են բաղդատմամբ եղած անհամեմատ մեծ կորուստներուն:

Որքան, քաղաքիս մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը զրկելով յիշեալ յանձնախումբին, որուն պէտք է զիմել Պ. Բիէն Գիլյոսի հասցեով, բացի դրամը ապահով և աւելի շուտ իր նպատակին հասցնելու առաւելութենէն, մենք կատարած պիտի ըլլանք նաեւ ուրիշ պարտականութիւն մը:

Ասկէ միայն յանի մը ամիս առաջ Պ. Գիլյոսի Պուլկարիս այցելած միջոցին, Ֆիլիպէի հայերս մասնաւոր փութակոտութիւն մը ցոյց տուինք անոր արժանաւայել ընդունելութիւն մը ընելու, ատով յանձին Պ. Գիլյոսի բոլոր Եւրոպայի հայասէրներուն մեր երախտագիտութեան և համակրանքի չափը ցոյց տալու համար: Այս անգամ ալ առիթը կը ներկայանայ ցոյց տալու որ մենք գիտենք նաեւ գործնականապէս գնահատել և քաջալերել անոնց հայանպաստ և մարդասիրական գործունէութիւնը:

Վստահ ըլլալով որ բոլոր հասարակութեան կողմէ ընդունելի պիտի ըլլայ այս առաջարկը, կը յուսամ որ Պատ. Թաղ. մասնախումբն ալ նկատողութեան պիտի առնէ ներկայս:

Երուսեղ  
Փ. Պոլիս  
Նոյեմ. 6 1904

ՄԵՆՏԱՐԳՈՅ ԽՄԱՐԿԻՐ!

Հայերի մէջ ընթերցանութիւնը չի ընդհանրանում, պահանջ չի պահուում, հրատարակում են գրքեր, պարբերական հրատարակութիւններ, բայց գրանք ունին ընթերցողների մի ողորմելի քանակ: Եւ այդ երեւոյթը տեղի ունի հայերիս մէջ ամեն տեղ, ամեն երկրի մէջ: Անցեալ օր առիթ ունեցայ խօսելու Պուլկարի ամսագրի խմբագրի հետ այդ մասին: Դանդաղ և գանգատ մեր անբարեխիղճ հասարակութիւնից որ չէ խրախուսում իր գործիչներին, Ահա այդ գանգատի առթիւ է որ մի երկու տող պիտի գրեմ, յուսուով որ չէք մերժի տեղ տուլ նրան յիարժուածի էջերում: Պուլկար ամսագիրը վերջացա

նում է չորրորդ տարին, ինչ հրատարակում է նոր խմբագրութեամբ: Չորս տարուայ ընթացքում բաժանորդների թիւը հետզհետեւ աճելով, 800-ից հասել է 900-ի: Չնայած որ դա մեծ յաջողութիւն է, մինչեւ այժմ եղած հայ ամսագրերի հետ համեմատած, բայց գարձեալ չի հոգում ամսագրի ծախսը, որովհետեւ, նախ Պուլկար համարները տալիս է բաւական հաստ և յետոյ՝ ընդունել և պահպանում է կանոնաւոր հոնորարի սկզբունքը, վճարելով աշխատակիցներին՝ ինքնուրոյն դրուածքների համար՝ երեսին մէկ բուբլի, իսկ թարգմանականներին 50 կոպէկ: Ամեն տարի ֆլուս անելով, Պուլկար այս չորս տարուայ ընթացքում ունեցել է 9000 բուբլի դէֆիցիտի մի գումար: Դա մի ցաւալի իրողութիւն է:

Ռուսական ամսագրերը, երբ 25000 բաժանորդից աւելի չեն ունենում, այլեւս անկարելի են համարում ամսագրի հրատարակութիւնը: այդ նրա համար է, որովհետեւ նրանցում վարձատրութեան չափը մեծ է և ուս գրական շրջաններում շատ ասորիներակ է, երբ խմբագիրը, կամ գրողը զրկանքներ է կրում: Իսկ խեղճ հայ գրագէտները, խմբագիրները ուղղակի նահատակներ են: Պուլկարի այժմեան իսկական խմբագիր-հրատարակիչը ծախսել է ամսագրի վրայ իր ունեցած չունեցածը. եթէ հասարակութիւնը չչտայէ խրատխօսելու ամսագրին, անշուշտ անկարելի է շարունակ ֆլուսով ամսագիրը հրատարակել: Որպէզ զի Պուլկարի խմբագրողն էլ վարձ ունենայ (այժմ խմբագիրը ձրիաբար է աշխատում) և ամսագիրը անֆլուս հրատարակի, հարկաւոր է առնուազն 1200 բաժանորդ:

Մի երկու խօսք եմ կամենում ուղղել Պուլկարի տարածած շրջաններում, յուսալով որ անարձագանք չի մնայ: Պարսկահայերի, մանաւանդ արտասահմանի հայոց մէջ Պուլկարը շատ քիչ բաժանորդներ ունի: Բարոյական պարտաւորութիւն է, որ այդ տեղի հայերը, ուր անշուշտ յիարժուած տարածւած և ընթերցողներ լայն շրջան կուրենայ, նըպաստեն հայոց առաջնակարգ ամսագրին, մանաւանդ, որ նա տալիս է տնդաւար նիւթեր և հետզհետեւ համախմբում իր շուրջը շնորհալի և պատրաստուած գրողներ:

Աշխատել պէտք է առհասարակ հայ տըպագրական խօսքի տարածման համար. թող անի այդ ամեն մի սրտացաւ հայ:

1904 Հոկտ. 31  
Թիֆլիս

ՀՄԱՐՆԵՐՈՒ ՄԱՐՏՆԶՈՒՄԸ

(Շար. Ասիոյի քիւն)

Կենթագրեմ որ այսօրուան սուկալի տեսարանին պատճառները ուրիշ կերպ կարելի է բացատրել: Սխալը անհաստական դիմադրութեան հաշուի մէջ չէ, որովհետեւ իրապէս մարդկային բնութիւնը այսօր ալ նոյնն է ինչ որ առաջ էր, թէեւ գաստիարակութեամբ մեծցած է անոր պատերազմական տանջանքներ տանելու ընդունակութիւնը: Եւ ոչ ալ զէնքերու ուժը, որը միայն ազգած է պատերազմական շարքերուն խորունկութեանը և զօրաբաժիններու շարժման մեծնանալուն: Այս երեւոյթը բնական է և իր բացատրութիւնը կը գտնայ բնական երկու փաստերու մէջ՝ երկու ցեղերու էթնիկական նկարագրին և պատմութեան:

Ճարտնացիներու վերաբերմամբ բաւական է որ ակնարկ մը նետենք անոնց ժամանակակից պատմութեան վրա որ կարենանք անոնց զինուորներուն կուռի մէջ հրաշալի տոկունութիւնը բացատրել:

Նոյնիսկ առանց անոնց պատմութեան խորքերը մտնալու կը բաւէ որ բարենորոգումներու շրջանը զննենք, որպէսզի կարենանք այդ ժողովրդին, որը շատ նոր է եւրոպական քաղաքակրթութեան համար, անհաստական և հաւաքական դիմադրութեանը վրայ գաղափար կազմել: Եթէ ընդունինք եւս որ եւրոպական քաղաքակրթութիւնը խոր արմատներ ձգած չէ՝ ճարտն ժողովրդին մէջ, այնու ամենափոքր պիտի խոստովանինք որ անոր մէջ կատարուած արագ էտրիսիան արդիւնք է անոր անհաստական և հաւաքական տոկունութեան:

Առանց հոգեկան այդ յարատեւ տոկունութեան այդ բարենշրջումը չէր կրնար տեղի ունենալ և այդ յարատեւութիւնն է որ կը բացատրէ ճարտնական զօրքի դիմադրութիւնը:

Ռուսը արագ բարեփոխում ունեցած չէ, սակայն ունի դարեւոր պատմութիւն, որը, եթէ Պետրոս Մեծի շրջանով սահմանափակուինք, փորձերու պատմութիւն մըն է, լուս, առանց մեծ շարժումներու, սակայն գրեթէ միայնակալ յարատեւ մղուած ու յաջող: Նոյն իսկ հողային տարածութեան ընդարձակումը կատարուած խաղաղ կերպով, ապացոյց է այդ ժողովրդին մեծ հաստատակամութեան, անոր անգրգռելի կամքին: Իրապէս անգրգռու է, բայց միշտ անդառնալիօրէն ուղղուած դէպի մէկ ուղղութիւն:

Ֆալագ

Եթէ միայն յիշենք վերջին հարիւր տարիները մենք կը տեսնանք որ Ռուսիան 1812ին գիւմարտեց զաշխակցած զօրաբանակներուն, որոնք կառավորողութիւն նաբոլիօնէն, և յաղթեց 1829ին առ յաղթեց թուրքերը, և 1877-78ին նոյնպէս. 1854-55ին վճռողական կերպով կը դիմագրէ և ևրոպական միութեանը շատ զօրեղ թշնամի մը, և միայն այդ մասնակ Ռուսիան ընկճող կը տեսնանք:

Իսոյ ի՛նչ կը տեսնանք այս պատերազմին մէջ. կը տեսնանք Ռուսիան գրեթէ ջնջուած ծովուն վրայ շնորհիւ ճարտական յանկարծակի յարձակումին, անկարող իր նաւատորմով չափուելու ամբողջ թագաւորի հետ, որ կը հեռանայ սաւանց նաւ մը զո՛հ տալու: Յամաքի վրայ կը տեսնանք անոր յուսահատական դիմագրութիւնը Բորթ Թերթուրին մէջ, գերազանցող թշնամուն գէժ և պաշտպանողական ամենագոյն պայմաններու մէջ: Կը տեսնանք Ռուսը Բրնչուէն մինչև Եօսիսէ փոփոխակի յաջողութեամբ, բայց միանգամայն զարմանալի կորուստով և գերանական հաստատակամութեամբ:

Երեւոյթը ուրիշն շատ բացատրելի է. ան երկու արտայայտութիւնը կը գտնայ երկու հակառակորդներուն հոգիներուն մէջ, որոնք երկուսն ալ յարեւմտեան սարսփելի մարտնչութիւն մէջ:

Ռուսերու Եօսիսէի քով ցոյց տըւած հրաշալի և հերոսական դիմագրութիւնը մեր մէջ յարգանք և զարմանք կը յարուցանէ: Ոչ ոք չի կրնար ըսել թէ վաղը այդ հսկայական «թուրքերին» մէջ յաղթութիւնը Ռուսերուն թէ ճարտանշինքուն կողմը կը լլայ: Մինչև օրս միայն կը հաստատուի այս, որ ռուսերը իրապէս ունին մարդ, ինչպէս ունին և ճարտանշինքը, որը զինքը մարտական արուեստին մէջ վարպետ ցոյց տուաւ, որ կրցաւ իրական նահանջը տողուն զիմագրութեան վերածել, յաջողութեանց յայտնի կարելիութիւններով, ինչ որ պատահեցաւ Լիստոսկի հրաշալի նահանջի առեւն:

Վաղուան օրը մեզի ինչ կը ընէ, չենք գիտեր, բայց այսօր կը տեսնանք որ երկու կողմը կողմերն ալ պատերազմական մեծ բարեմասնութիւններ ունին, վարպետ վարիչներ վարպետ զինուորներով:

Բարգ. «Ի՞նչ ժողովուրդ սիսալիս»

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՍՐԻՉԷՆ

—o—  
Որոշել... Որոշեցի... Որոշե՛նք...

Էգնեանք որքան ճշուակեց յետոյ և միւս չորս փոքրերը պահելով, կը կարծէ որքան խնդիրը խեղդած ըլլայ, և եթէ գտնուէր կար շահագործել չը կրցաւ՝ կը փորձէ անոնցով իր Պոլսոյ գործերը կարգի գնել և Առլթանի ու Միւնիք փաշայի աջը մտնայ. հոգ չէ թէ տղայք հոն վաղ կամ ուշ թուրքի գանկի առջեւ գտնուի: Իր խելով այդ խնդիրը վերջացած կարծելով կրկին վրէժ լուծել իր վատ մը ըլլալը երեւան հանողներէն: Իր մանկ լաւիկ, իր բողբոռ վէթիլ-խարջ Մանուկի գործակից և իր խկարկու (բայց այս անգամ իսկական մասնակի խնկարկու) Միսաք տէր Միքայէլեանին կը գրէ գտնուելու Դուստրուսեանցի դէմ որ պատակ մը իջուցած է իր ձեռքով, բայց բարի չի հայ գաղտնի կողմէն, որքերու խնդրի ամենագլխաւոր մեղսակցի ու յանցաւորի և Բարիլի հայ գաղտնի անդամները անպատուի երեսին, 100 ֆր. պատակի փոխարէն պահանջելով, էգնեանք զրոյս է այդ միւս եւնոյն մասնակի խնկարկու տէր Միքայէլեանը, (թող ներս ինծի, որ ասկէ յետոյ տէր Միքայէլեան անուան փոխարէն միայն մասնակի խնկարկու անունը պիտի գործածեմ, որոհեաւեւ այդ անունը որ ինքն է ընտրել, իրեն շատ յարմար է) ուստի զատ մը բանալի Բասմալեանի դէմ. այս երկրորդ զատը իսկապէս խայտառակ գտն մըն է, որի շարժառիթը չեմ ուզեր երեւան հանել և երբեք չեմ չեմ երեւան հանել, սակայն կրնամ ըսել որ յանցաւորները կը ներկայանան Բասմալեանի և Վասմալեանի քահանան: Եթէ Բասմալեանը միայն լսենք, Բասմալեանը կարողարարայ, և նոյն ատեն տէր Վասմալեանի մօրուքը լողով խուզելու հարկ կը լլայ, եթէ տէր Վասմալեանն լսենք, Բասմալեանը յանցաւոր է բայց զարձեւ տէր Վասմալեանի մօրուքը խուզելու է և այս անգամ եթէ ոչ լողով (ինչպէս կը նեն շայտատան ամենավատ քահանաներուն) այլ գէթ անելով խուզելու և փրկող վրայէն հանելու է...

3. Որքերը բողբոռ են էգնեանքի դէմ ընդհանուր դատախազին:

4. Դուստրուսեանց օրքերու ազգականներու, Փարիզի հայ գաղտնի և իր իր կողմէն պիտի բողբոռ ընդհանուր դատախազին:

5. Բասմալեան կը բողբոռ Մանուկի խնկարկուի դէմ զինքը սրիկայ անուանած ըլլալուն համար:

6. Տողաւ արեւան կը բողբոռ Մանուկի խնկարկուի դէմ զինքը սրիկայ անուանած ըլլալու համար:

Կեցցէ՛ հայ ազգ. կեցցէ՛ աղա էգնեանք: Էգնեանքի շնորհիւ հայ անունը ֆրանսական ատեններու մէջ պիտի փայլի, բայց մենք մեծ յոյս ունինք որ հակառակ էգնեանքի տասնեակ միլիոն կարողութեան (որ հիմա վախճն 1-2 միլիոնի կիջեցնէ...) ֆրանսական ատենի առաջ ինքն և իր մանկաւիկները պիտի խայտառակուին և դատապարտուին:

Հոս չէ՛ որ կը լինայ էգնեանքի արարքը, էգնեանքի տեղը որոշուելու համար քննենք անոր ուրիշ ազգային գործերը կամ գործունէութիւնները (1) էգնեանք այն Մարզն է որ Փարիզի հայոց անուանական թա-

ղականութիւնը իրեն քարտան ըրած և անոնց գլուխ խլար անցուցած, իր ուզած սեղը կը տանի, իր ուզածը ընել կուտայ, ազգային սովորութիւններն ա՛լ, օրէնքն ա՛լ, արարողութիւնն ա՛լ, կղերն ա՛լ, եկեղեցին ալ իր քահանայութիւն համար խաղցնելով, 25-ք գործանար, չէ՛ք ապշիր, երբ բեմ թէ հակառակ Պրանսայի նման սահմանադրական երկրի մը մէջ գտնուելուս մեր թաղականութիւնը, էգնեանքի շնորհիւ, ընտրուած է հակասահմանադրական սխառտով մը, հայ սահմանադրութիւնը ուղի տակ դրուելով, ինչո՞ւ այնքան անտարբեր է Փարիզի հայութիւնը՝ ընդհանրապէս, և անուանական թաղականութիւնը՝ մասնաւորապէս՝ ազգային ընդհանուր խնդիրներու նկատմամբ — Զօրիկ Զօրեան, զբամ համբուլու մօլի մը, կիրակի օր չարչըր մէջ զբամ համբուլու հանձնքէն զրկուած, գոհ է եթէ էգնեանք իրեն բերանը գնէ թաղականի իւրար և իր ետեւէն քաշէ, բաւականանալով այն հոգեկան մեծ հանձնքով որ կուենայ կիրակի օր եկեղեցիի մէջ մօլի և խաչահատորի թասերու զբամը համբուլով, Ուրիշներ, փոքր գոհարարաւորներ, փոքր գողեր, էգնեանքի միջնորդներ կամ ստորագրատուներ, բերանին մէջի տեղ չորս կը բանան թաղականի իւրար կլլելու և էգնեանքի ետեւէն զբաւու այն հոգեկան մեծ հանձնքով որ անտարբեր անտեսուելու և անոր հետ անձնական գործերու մասին խօսելու, Տէր Վրասմալեանն իր դուս վրայ տասնաբանայ պատուիրանները գրած ունի, որոնք ազգատներու համար են, և են՝ «զիս մի ձանձրացնէք, ինձմէ փարս մի ուզէք, պարագ բանի համար իմ տունս մի գա՛ք, (աւելցնենք) և իմ անունս պարագ տեղ բերանիդ մի առնէք (ստորագրուած չունի աստուածը...) իմ տանս մէջ մի ծխէք, կողիկնիդ սրբեցէք, ես պանքա չունիմ», փոխանակ գրած ըլլալու ճեկայք վշտացեալք և տառապեալք... Եկայք տարին ես 12000 ֆրանք կը շահիմ, եկայք, ձեզի ալ բաժին հանեմ, ձեր գովասանքներուն ալ պէտք ունիմ, որովհետեւ տիրացուիս «Բիւզանդիոն» մէջ ըրած գովասանքները շատ ճիշտ չեն և քանի որ Մանթալեանը անոր ալ 100 ֆրանք ամսական չը տուաւ «տակա փուտե... Փարիզի հայ խմբագիրները ծանրաբեռնեալ տեղային թանկ ծախքերով, իրենց թերթերը պղտկացող, իրենց գրիչներու սահմանը նեղացուցած, մասնաւորած, չեն կրնար մինակնին, առանց Փարիզի հայ գաղտնի աջակցութեան և ընդհանուր հայութեան աջակցութեան զիմակազուրկ ընել այս բողբոռը: Իսոյց այս բողբոռը լիսասկար արարներու պատճառը կը հանդիսանայ էգնեանք, ու փոքր «էգնեանքները» և ատի աւելի մանրամասն պիտի բացատրենք եթէ կարիք գագուցուի. (թէ, արդեօք գրադատներու մէջ եղած երկպառակութիւններու ընդհանուր շարժառիթ պատճառները այս վարպետագիտականները չեն... ատի պապան պիտի լուսարանէ...): Մանթալեանի եկեղեցին որ պ Մանթալեան պատրաստ է հայոց նըւերի, էգնեանքն է պատճառը որ մինչև այսօր հայոց չէ նուիրուած. էգնեանք այդ եկեղեցին չինել տըւած է այնպէս որ կան կերտուած-

ներ որոնք պղծու մըն են լուսաւորչական եկեղեցական կարգ ու արքին: Էգնեանք եկեղեցիի մէջ իբր ժամկոչ, դռնապան, եկեղեցի և բեմ մաքրող և եկեղեցիի դուռը բացող զբամ է ֆրանսացի մը որ կը բեն իր մեթոդներուն մէկուն նախկին վարիցը փիլիսոփայի կողմ, մինչդեռ հայ եկեղեցին այդ պաշտօնները կատարողներուն մասնաւոր կարգ կուտայ: Մենք անձամբ տեսանք, որ եկեղեցիի օժուկն յետոյ բեմի վրայ նորոգութիւններ կը լլային ուր ֆրանսացի դռնապան և գործադրները իրենց արտաբերութիւն փոքրացող բերնէն կը թշնելին տաճարին վրայ այս բողբոռ պղծուին են մեր ազգային օրէնքներուն, աւանդութեանց, ձեւերուն և սովորութեանց: Եկեղեցիին մէջ կերպէն չորս հինգ հոգի, որոնցմէ մէկը կառնէ 70 ֆր. և Մանթալեանէն 20 ֆր.—90 ֆրանք ամսական, ուրիշ մը՝ քառասուն ֆրանք, երկրորդ մը 45 ֆր. և ն, բայց այս երգիչները երաժիշտներ չեն, իշու մը զոտը մարդ սիրով պիտի տանի եթէ անգամ մը այս շրջան զանցող լսէ ինչու ատենց ընտրել—որովհետեւ ա. նոնցմէ մէկը Տերպապան «Բիւզանդիոն»ի մէջ գովողն է, միւսը էգնեանք շոյողը, երրորդը ուրիշ մը թեկնածուն:—Ասեմէ մը ի վեր Փարիզի մէջ կը գտնուի երաժիշտ պ. Եօսիս. Մուրատեան որ եկեղեցիի օժման օրը Փարիզ հասած ըլլալով, իր ներկայութեամբ կրցաւ փայլեցնել հայ երաժիշտութիւնը, հակառակ ուրիշներու աններդաշնակ գոնցողներ, զիս իբր պարզ երգիչ չկրնար նշանակուիլ Փարիզի եկեղեցիին համար և շատերուն 70-90 ֆրանք առող էգնեանքը ու իր քարտանը կը գրծուարանայ պարուն Եօսիս. Մուրատեան 75-80 ֆր. ամսական որոշել:

(Շարունակելի)

Բարիք

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առ Պ. «Սարսափ»

«Շարժում» ընթերցողները, անշուշտ կարգացին, «Սարսափ» ստորագրութեան տակ, սեպտեմ. 27 թուականաւ, Պոլսէն զըրուած թղթակցութիւնը:

Պ. «Սարսափ» ինչ լինելը կարենալ հասկնալու համար, մեր պատասխանը ուշացուցինք:

Պ. «Սարսափ» իւր այդ թղթակցութեանը մէջ, տեղույս Ազգային գործերը քննադատելով, մասամբ մըն ալ տեղույս, հայ-առեւտրական ընկերութիւնն քննադատած է:

Անշուշտ Պ. «Սարսափ»ը ոսկորի ցաւ ունի:

Փոքրանէն վնասուելէն ի վեր հոս պարագ կը թափառի, և ինչու Պ. Արիսը արգելք հանգիստացած է զինքը հաշուակալ ընդունել չի թողալով, հայ-առեւտրական ընկերութեան մօտ:

Շատ տեղ զարկաւ իւր գրծաբաղդ գլուխը Պ. «Սարսափ» բայց միշտ մերժուեցաւ, նոյն բաղդին արժանացաւ նաեւ վերոյիշեալ ընկերութեան մօտ:

Այսօր իւր թունաւոր ժամիք-

ներով գինուած . արեւի նման  
փայլով ճշմարտութիւնը ոտնա-  
կոխ ընելով կրճգնի վրէժ լու-  
ծել . բարոյական ոճիր գործե-  
լու աստիճան ստորնալով :

Պ. Սարսաղ\* ամօթը մոռցած ,  
իւր թղթակցութեան մէջ կը գո-  
ռայ . Պ. Արիս ու Բագլաճեան ,  
տեղւոյս գաղթականութեան ա-  
րիւնը մտնել ուզած են , խոշոր  
զեղծումներ կատարած են , որոնք  
իբր թէ նոր եկող խորագէտ հաշ-  
ուակալի ջանքերով երեւան ե-  
լած են :

Ամօթ , հազար ամօթ , լսիտ  
մե՞ծ ամօթ :

Միթէ և ինչո՞ւ Պ. Սարսաղ\*ին  
յիշած այդ հոս.հոս հաշուակալը  
քաջութիւն չունեցաւ յատուկ  
կազմուած քննիչ յանձնարարի  
ատալ պարզել փաստերով իւր  
յիմար երեւակայութեանը մէջ  
ծնունդ գտած զեղծումները ու  
շարունակ իրեն եղած գիմումնե-  
րէ իոյս տուաւ :

Արդ՝ հրապարակու կը հարց-  
նեմ Պ. Սարսաղ\*ին և Տեար հաշ-  
ուակալ Խոփալեանին , թէ ե՞րբ  
քննած , ե՞րբ հաստատած են այդ  
զեղծումները , ինչպէս ու ինչ  
գումարներ զեղծուած են :

Մարդ յիմար , կամ ոճրագործ  
ըլլալու է այդքան ցինիկութիւն  
ցոյց տալու համար . վատութիւնն,  
ամբաստանութիւնն , կեղծիքն ու  
սուտն անգամ մեր կարծիքով  
չափ մը սահման մը ունենալու  
են :

Տեղւոյս առեւտրական ընկե-  
րութիւնը շարունակ ունեցած է  
կանոնաւոր վարչութիւն , հսկիչ  
ու քննիչ անդամներ , որոնց  
պարսքն է այդ կարգի զեղծում-  
ներ եղած լինեն զանոնք հրա-  
տարակել :

Քննիչ յանձնարարներ ընկե-  
րութեան բոլոր գործառնու-  
թիւնները կանոնաւոր գտնելուն  
իւր վաւերական ստորագրութիւն-  
ները տուած է :

Դալով Պ. Սարսաղ\*ի այն կէ-  
տին թէ ընկերութեան անգամ-  
ները միանալով արտաքսել վրճ-  
ած են զիս և Արիսը . Այս ալ  
այնքան խոշոր կեղծիք մ'է , որ  
րուն վրայ ծանրանալը աւելորդ  
կը գտնեմ . քանի՛ քանի՛ ան-  
գամներ , հրաժարականս մատու-  
ցած եմ ու մինչեւ այսօր միշտ  
մերժուած է ու ընդունուած չէ՛ :

Պ. Սարսաղ\* եթէ ձեր թըզ-  
թակցութեան մէջ գրուածները  
իրողութիւններ են . կը հրաւի-  
րեմ ձեզ , որ ձեր փաստերով ու  
ձեր իսկական գոյնով հրապարակ  
եւլէք :

Հակառակ պարագային միշտ  
թքնելով պիտի անցնինք քեզ  
նման բաղդախնդիրներ զրաժ-  
ների վրայէն :

Թ. Պազլաճեան  
4 Նոյեմբեր 1904  
Պոլսից

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսից կը հեռագրեն : «Սայթ»  
թերթին որ Ռուսմանական դեա-  
պանը շտապողական գիմումներ  
կընէ Բ. Դրան Մակեդոնիոյ քու-  
ցուվահներուն համար :

— Նոյեմբեր 11ին Պոլսէն կը  
հեռագրեն թէ զերմանական կա-  
ռավարութիւնը բանակցութեան  
մտած է Բ. Դրան հետ եկաւճու-  
ների ապահովութեան համար ,  
որը Գերման կառավարութեան ի-  
բրը երաշխաւորութիւն պիտի  
ձառայէ Բաղտասի երկաթուղիի  
գծին երկրորդ ճիւղին շինու-  
թեանը համար :

— Նոյեմբերին Պոլսէն կը հե-  
ռագրեն թէ Սուլթանը Մահմետի  
վերադարձին երկրպագութեան եր-  
թալու հանգէտը կատարուեր է ա-  
ռանց սեւէ պատահարի : Սուլ-  
թանը ծովէն անցեր է երկրպա-  
գութեան տեղը :

— Պրանսական կառավարու-  
թիւնը Խամախէն մինչեւ Հալէպ  
երկաթուղիի գիծ շինելու արտ-  
նութիւն կուզէ , քիլոմետրի ե-  
րաշխաւորութեամբ ինչպէս Սի-  
րիոյ երկաթուղին է : Թուրքիան  
համաձայնի չի ուզեր , բայց Յը-  
րանսան կըսպանայ պանք 0-  
թոմանին նախաձեռններ չընել ,  
առանց որու Թուրքիա ապրիլ չի  
կրնար : Թուրք պաշտօնական շը-  
ջանակները այս պատճառով յու-  
սահատական կացութեան մէջ են :

— Պուլկար կառավարութիւնը  
բաւական լուրջ նօթա մը տուած է  
Թուրքիոյ Սօֆիայի գոմիսէրին ,  
էտիրնէի գաղթականներուն հո-  
ղերու գրաւելու և զանոնք ներս  
չընդունելու մասին :

— Բ. Դուռը նոր գիմումները  
բաժ է յոյն կառավարութեան  
յունական հրոսարմբեր կազմա-  
կերպուելու մասին նոյն ատեն  
խիստ միջոցներ ձեռք առած է  
սահմանազրուի վրայ :

— Եւրոպական թերթերուն կը  
հաղորդեն թէ Հիւսնի փաշան հը-  
րաման տուած է որ նաւաորմիկ  
մը պատրաստուի Սեւ ծովեան նա-  
ւահանգիստները այցելելու հա-  
մար :

Ռուս դեսպանը այդ հրամանը  
Անգլիոյ կողմէ զրգուած ցոյց մը  
կը համարէ :

— Իեսպանները Բ. Դրան ու-  
շագրութիւնը հրաւիրեր են Ի-  
բէքի նահանգին վրայ , ուր թը-  
քերը կրկին սկսած են գինուած  
պտըտիլ , իսկ քրիստոնեաներուն  
այդ արգելուած է :

— Նոյեմբեր 10ին Պոլսէն կը  
հեռագրեն որ զինուորական գըպ-  
րոցի ռուսացի Սրիֆ պէյ . մա-  
յօր նաքի պէյ և 20 ուրիշ սպա-  
ներ ու պաշտօնեաներ ձերբա-  
կալուելով Սիէն արտորուած են :

ՌՈՒՍԻԱ

Ջէմսթոններուն ներկայացուցիչ-  
ներու , որոնց թիւը 98ի կը հասնի ,  
ժողովը Բեթերսպուրի մէջ Օրեոյ  
նահանգին ազնուական պարագլու-  
ներէն միոյն տուել տեղի ունեցեր է .  
ժողովը հետեւեալ որոշումը տեւր  
է .— Ռուսաց ներկայ կացութիւնը  
անբնական է . այդ վերջնելու ան-  
հատին անձեռնմխելութիւնը , ան-  
կախ դատարան ունենալու պահանջը  
կայ . Անհրաժեշտ է նաեւ խզիք ,  
խօսքի եւ մամուլի ազատութիւն .  
Անհրաժեշտ է որ ժողովուրդը իր  
ներկայացուցիչներով մասնակցի օ-  
րէնսդրութեան եւ կըլեմտից կար-  
գադրութեան գործին եւ վերահսկէ  
կայսրութեան վարչական իշխանու-  
թեան :

ժողովը սահմանադրութեան ա-  
ռաջարկին ատեն երկու մասի բաժ-  
նուեր է . մեծամասնութիւնը 71  
ձայնով սահմանադրութիւն կուզէ .  
Այս որոշումները պիտի ներկայաց-  
ուին արտաքին գործոց նախարարին :  
— Նոյեմբեր 11ին Բեթերսպուրիէն  
կը հեռագրեն որ պետական խորհր-  
դական կերպերի , որ ներքին գոր-  
ծոց նախարարութեան մէջ ճիւղին  
պեան է , յանձնուած է ռուսիստի-  
րել Լեհաստանի պահանջները , որոշ  
ներքին ինքնավարութիւն կամ գէ-  
մաթովական վարչութիւն մտցնելու  
համար :

— Կառավարութիւնը արտօնած է  
Լեհաստանի եւ Լիթվայի քանի մը  
նօրմալ զարոցներու մէջ տեղական  
լեզուներով կատարուին դատարա-  
կութիւնները :

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄ

Բալթիկեան նաւատորմիչը հա-  
սած է Բօրթ Մայիտ Անգլիական  
հսկիչ մակոյկներ կը հսկեն նա-  
ւատորմիչը :

— Թօքիօէն «Ստանտարտ» կը  
հեռագրեն թէ հաւանական է որ  
Շախէի և Խունխույի մէջ տեղերը  
մեծ ճակատամարտ տեղի ունե-  
նայ :

— «Նօլօէ Վրէմիա» թերթը  
ռուս ծովային իշխանութեան կը  
թելագրէ Սեւ ծովեան նաւատոր-  
միչը եւս ծայրագոյն արեւելք  
ղրկել :

— Ճաբոնացիները Բօրթ Իր-  
թուրի քովերը գրաւեր են անդ-  
լիական առեւտրական նաւ մը՝  
30000 բաժին գօնէսէրի միտով :

— Թայմի թերթը կը հաղորդէ  
որ ճաբոնացիները յաջողած են  
Բօրթ Իրթուրի վառողի պա-  
հաստներէն մին ուժակոծելով  
հրդեհել . քաղաքը կը վառի :

— Փոքրիկ ընդհարումներ տե-  
ղի կուսնեան հակասակ զօրաբա-  
նակներու միջով . երկուստեք  
տասնեակներով զոհեր պատճա-  
ռելով :

— Մարէշալ Օյամա շարունակ  
օգնութիւն կը տանայ :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Բարիկ — Հրանա  
Նախկին պատկերը կրուած է Եր-  
կու մէջ վերնագիրը , զրկուած է  
Պաքուէն , Վահէ ստորագրու-  
թեամբ 1902 թուականի օգոստո-  
սին : «Նարժուճ» ի այդ թիւէն չը  
կայ այժմ :

— Բաֆրէ-Էլ-Ղայաթ . — Աղամ  
թագուորեան , առաջ գուք ուրիշ  
հասցէ տուած է իւր որի միջոցաւ  
ձեռնի պիտի հասնէր , հիմա ալ  
ուղղակի ձեր անունով կուղար-  
կենք ձեր քարթի համաձայն ,  
խնդրենք ճշտէք :

ԲԱՄԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Տարին վերջնայու մօտ է և մեր  
բաժանորդներէն շատերը զեռ իրենց  
բաժնեկիւնները չեն վճարած :

Կան և այնպիսիները որոնք երկու  
տարեկան պայտք ունին : Ինչպէս  
կերելի այդ մարդիկը կը կարեն թէ  
մենք թուղթը տէժբը ձրի կանոնք ,  
գրաշարները ու սպարաններն ալ ձրի  
կաշխմարն և մենք հայ չենք ուտեր ,  
այլ օգով կապրինք :

Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր չը  
վճարող բաժանորդները , մանաւոր  
անոր համար որ մենք երբէք ստաց  
բաժանորդներու պահանջին թերթ  
չենք զրկեր մարդու : Պահանջողը և  
իր պարտականութիւնը կատարելու  
տարրական զգացումէն զուրկ չը պի-  
տի ըլլայ :

Սեբագրութիւն

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ԴՊՐՈՑ

Ի Վառնա

Այս դպրոցը պիտի բացուի Ֆրան-  
սերէն Հայերէն և Պուլկարեան լեզու-  
ներու համար : Փափաքողք կրնան ու-  
սանիլ նաեւ Գերմաներէն , Անգլիե-  
րէն , Ռուսերէն և զաշնակ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ

Շնորհակալութեամբ ընդունե-  
ցինք Հայ Ուսանողական Միու-  
թեան հրատարակած Հայաստանի  
Քարտէզը , չքեղ կազմով :

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ  
Ռուսաստանում կէս րուպլի : Ամեն  
հայ պարտաւոր է ունենալ այս  
սիրուն և արժանի ու բաւական խը-  
նամբով պատրաստուած քար-  
տէզը :

Հասցէ՝  
Իւնիօն Տէ Էսիսեան Արմենիկ  
S'korouy  
Բիւ ռը լեֆոյ ռը Շիւի  
Ս'Դնէլ :

Отговорникъ  
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимности“ Варна